

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՄԻԷՍՄԻ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՒՅԲԻՇԵՎԻ ԳՈՒՆԱՎՈՐ ԿՈՆԳԼՈՄԵՐԱՏՆԵՐԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ (ԱԶԻ-ՅԱԼ ՏԵՂԱՄԱՍ) ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ՄԻԷՍՄԻ» ՍՊԸ
տնօրեն՝

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Երևան 2019

եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևութում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման

Արտադրական լցակույտեր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում՝ պոչանքներ)՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

ՀՀ Տավուշի մարզի Կույբիշևի գունավոր կոնգլոմերատների հանքավայրի Աջի-յալ տեղամասում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են կամպան-մասստրիխտի հասակի կրաքարերը, կավերը և կոնգլոմերատները:

Օգտակար հանածո հանդիսացող կոնգլոմերատները ներկայացված են անկանոն ձևի կուտակույվ, որն ունի փոփոխական կոնտակտներ ներփակող կրաքարերի հետ: Կուտակի մակերեսը բնական պայմաններում կազմում է մոտ 1,5հա, լայնությունը՝ 170մ, երկարությունը՝ 90մ:

Կոնգլոմերատների հզորությունը փոփոխական է, ուղղաձիգ առավելագույն հզորությունը 51մ, նվազագույնը՝ 9մ, միջինը՝ 31,7մ: Մերձմակերևութային հատվածում (մինչև 0.8-2.5մ) գունավոր կոնգլոմերատները հորմահարված են ճեղքավորված: Դիտվում են մակերևութային ճեղքերի երեք համակարգեր՝ միջօրեական և լայնակի ուղղության ճեղքերի 60-80° անկման անկյուններով և հորիզոնական ճեղքեր: Կոնգլոմերատները կազմված են կրաքարերի զլաքարերով, գունավորումը՝ բաց-վարդագույնից մինչև մուգ-կարմիր, շագանակագույն: Գլաքարերի չափերը տատանվում են մի քանի մմ-ից մինչև 20սմ, հիմնականում՝ 2-10սմ: Գլաքարերը ձվաձև են կամ կլոր, լավ հղկված: Ապարի ֆիզիկամեխանիկական հատկությունները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Հ/	Ցուցանիշը	Աղյուսակ 1.	
		Չափման	Միջին

Հ		միավորը	մեծությունը
1.	Իրական խտությունը	գ/սմ ³	2,71
2.	Ծավալային զանգվածը	կգ/մ ³	2640
3.	Ծակոտկենությունը	%	2,62
4.	Ջրակլանումը	%	0,45
5.	Ամրության սահմանը սեղման ժամանակ	կգ/սմ ²	
	- չոր վիճակում		
	- ջրահագեցած վիճակում		905
	- 50 փուլ սառեցումից-փափկեցումից հետո		776
6.	Փափկեցման գործակիցը		674
7.	Սառնակայունության գործակից		0,84
			0,86

Հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ 19.08.1970թ.-ի N 6028 արձանագրությամբ ըստ B կարգի 218,0հազ.մ³ քանակությամբ:

Բլոկների ելքը լեռնային զանգվածից կազմել է18%, սալիկների ելքը Բլոկից՝ 14,9մ²/մ³:

Հանքավայրի օգտակար հանածոն համապատասխանում է ԳՈՍՏ 9480-89 պահանջներին:

Հանքավայրը նախկինում շահագործվել է, առկա են բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները:

▪ *Նախատեսվող գործունեության բնութագիրը*

«ՄԻԷՍՄԻ» ՍՊ ընկերությունը Կույբիշևի գունավոր կոնգլոմերատների հանքավայրի Աջի-յալ տեղամասում օգտագլար հանածոյի արդյունահանման աշխատանքները նախատեսում է իրականացնել միակողմանի երկայնակի համակարգով, արտաքին լցակայանառաջացմամբ:

Արդյունահանումը կատարվելու է վերնից ներքև 2,5մ բարձրության աստիճաններով: Անվտանգության բերմաների նվազագույն լայնությունն ընդունվում է 2մ: Նախագծային բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ ցուցանիշները.

- երկարությունը մակերևույթին – մոտ 222մ,
- երկարությունը հատակում – 96մ,
- լայնությունը մակերևույթին – մոտ 104մ,
- լայնությունը հատակում – մոտ 14մ,
- մշակման խորությունը – 57,5մ,

- օտարման մակերեսը – մոտ 2,35հա:

Բացահանքի վերջնական եզրագծում ներառված են մոտ 203650մ³ գունավոր կոնգլոմերատներ, 15900մ³ մակաբացման ապարներ և 1650մ³ հողաբուսական շերտ: Մակաբացման միջին գործակիցը կկազմի մոտ 0,09մ³/մ³: Մակաբացման ապարները պիտանի են որպես լցանյութ մոզայիկ բետոնների ստացման համար:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը ընդունվում է 3000մ³: Բացահանքի ապահովվածությունը պաշարներով ընտրված արտադրողականության դեպքում՝ մոտ 68 տարի:

Մակաբացման աշխատանքների ժամանակ հողաբուսական շենտրիեռացվելու է և կուտակվի առանձին լցակույտերում՝ տարանջատված ժայռային մակաբացման ապարներից: Հողաբուսական շերտի կուտակումը նախատեսվում է իրականացնել բացահանքի հյուսիս-արևելյան եզրագծից մոտ 50-100մ հետավորության վրա, իսկ ժայռային մակաբացման ապարները բացահանքային դաշտի հարավ-արևելյան հատվածում:

Բացահանքի աշխատանքային ռեժիմը նախատեսվում է շուրջտարյա, միահերթ, 8 ժամ տևողությամբ հերթափոխով և տարվա 260 աշխատանքային օրով:

Արդյունահանման աշխատանքներն իրականացվելու են հետևյալ հաջորդականությամբ՝ մենաքարերի անջատում լեռնգային զանգվածից - մենաքարերի դուրս բերում հանքախորշից - մենաքարերի բաժանում բլոկների-բլոկների կոպտամշակում - բլոկների բարձում և տեղափոխում:

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո կկատարվեն 1630, 1640, 1650, 1655, 1660 և 1670մ հանքաստիճանների մակերևույթների (մոտ 6600մ² ընդհանուր մակերես) ռեկուլտիվացիա: Այդ նպատակով մակաբացման աշխատանքների ընթացքում հեռացված և կուտակված հողաբուսական շերտը կվերադարձվի բացահանքի տարածք և կփոփ 25-30սմ բարձրությամբ:

▪ *Նախագծման նորմատիվ-իրավական հենքը*

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

- ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ.-ի թիվ 365-Ն հրաման, որով կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին ընդերքօգտագործողների կողմից նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1463-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա

ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով սահմանվել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ *Գտնվելու վայրը*

Կույբիշևի գունավոր կոնգլոմերատների Աջի-յալ տեղամասը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Հաղարծին գյուղից մոտ 4,5կմ հյուսիս: Հանքավայրից մոտ 4,5կմ հեռավորության վրա անցնում է Մ4 միջպետական նշանակության ավտոճանապարհը: Մոտակա բնակավայրերից են Թեղուտ գյուղը և Դիլիջան քաղաքը (նկար 1 և 2):

Օգտակար հանածոյի արդյունահանման համար նախատեսվող տարածքը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով.

1. $X_1 = 4519078$ 8495861	$Y_1 =$	7. $X_7 = 4519232$ $Y_7 = 8495935$
2. $X_2 = 4519151$ 8495847	$Y_2 =$	8. $X_8 = 4519184$ $Y_8 = 8495941$
3. $X_3 = 4519178$ 8495865	$Y_3 =$	9. $X_9 = 4519136$ $Y_9 = 8495941$
4. $X_4 = 4519192$ 8495867	$Y_4 =$	10. $X_{10} = 4519109$ $Y_{10} = 8495909$
5. $X_5 = 4519212$ 8495862	$Y_5 =$	11. $X_{11} = 4519069$ $Y_{11} = 8495892$
6. $X_6 = 4519237$ 8495871	$Y_6 =$	

▪ *Ռելիեֆ, երկրաձևաբանություն*

Հանքավայրի տարածքը գտնվում է Կայենի լեռնաշղթայի (կամ Իջևանի լեռնաշղթա) տարածքում, որը Գուգարաց լեռների հարավ-արևելյան լեռնաբազուկն է: Երկարությունը 26 կմ է, առավելագույն բարձրությունը՝ 2507 մ (Հովք լեռ):

Տեկտոնական խախտումներով բարդացած հորստաձև բարձրացում է՝ կազմված եղցենի, կավճի և յուրայի ապարներից: Կատարային մասը հարթ է, լեռնագագաթները սեղանաձև են, լանջերը՝ զառիթափ ու մասնատված:

Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 3-4-ում:

Շրջանի ռելիեֆի հորիզոնական մասնատվածության խտությունը կազմում է 0,4-1,0 կմ/կմ²: Հովտա-ձորակային ցանցի խտությունը՝ 20,0-30,0 հատ/կմ²:


Բուն հանքավայրի տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Հեռավորությունը մինչև մոտակա հայտնի սողանքային մարմինը կազմում է մոտ 60մ (նկար 5): Սողանքը կայուն է, մակերևույթին չկան արտահայտված ճեղքեր:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ TAVUSH MARZ

Մարզկենտրոնը ԻՋԵՎԱՆ
4 քաղաք, 61 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների
երկարությունը՝ 421կմ




Նկար 1.




Նկար 2.


(արտագծված է 1:50000 մասշտաբի տոպոգրաֆիական քարտեզից)



Նկար 3.




Նկար 4.



Նկար 5.


Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N24-Ն հրամանի՝ հանքավայրի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 400սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 6):



Նկար 6.

▪ *Շրջանի կլիման*

Հանքավայրի տարածքին բնորոշ է բարեխառն տաք և խոնավ կլիման (նկար 7): Տարեկան միջին ջերմաստիճանի տատանումը չի գերազանցում 24 աստիճանը: Շրջանի ցածրալեռնային հատվածում օդի տարեկան միջին ջերմաստիճանը 9.2-10.5 աստիճան է. հունվարին՝ $-0.6-1.3$, հուլիսին՝ 19.9-21.1 աստիճան: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 37, բացարձակ նվազագույնը՝ -26 աստիճան: Անսառնամանիք ժամանակահատվածը տատանվում է 200-ից 210 օր: Ձնածածկույթն առաջանում է գրեթե ամեն տարի: Ձնաշերտի հաստությունը տատանվում է 5-ից 50 սմ, իսկ Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին այն հաճախ գերազանցում է 70 սմ-ը: Տեղումների տարեկան միջին քանակությունը տատանվում է՝ ստորին լեռնային



Նկար 7.

գոտում 537 մմ-ից մինչև 850-860 մմ բարձրալեռնային գոտում: Տեղումների առավել քանակությունը նկատվում է գարնանը (տարեկան նորմայի մոտ 35 տոկոսը), իսկ նվազագույն քանակությունը՝ ձմռանը (մոտ 12 տոկոսը):

Հանքավայրի շրջակայքում կլիմայական բնութագրերը բերված են 2-13 աղյուսակներում:

ՀԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԵՎ ԼՈՒՍԱՅԻՆ ՌԵԺԻՍ

Արևափայլ

Աղյուսակ 2.

Բնութագիր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
Տևողությունը, Ժ	156	137	161	158	191	221	197	181	201	178	137	132	2050
Առանց արևի օրերի թիվը	5	5	5	4	2	2	3	4	2	3	5	5	45

Օդի միջին օրական ջերմաստիճանի որոշակի սահմաններով
անցման ժամկետները և տևողությունը

Աղյուսակ 3.

Բնութագիր	Ցածր		Բարձր							
	-5		0		5		10		15	
Անցման ժամկետները	10 I	4 II	27 XI	22 III	16 IV	29 X	21 V	28 IX	14 VII	14 VII I
Տևողությունը (օր)	24		114		195		129		30	

Ջերմության ժամանակաշրջանի ($\leq 8^{\circ}\text{C}$) բնութագրերը

Աղյուսակ 4.

Սկիզբը	Վերջը	Տևողությունը (օր)	Ժամանակաշրջանի միջին ջերմաստիճանը ($^{\circ}\text{C}$)
11 X	4 V	206	-0,1

Հողի մակերևույթի ջերմաստիճանը ($^{\circ}\text{C}$)

Աղյուսակ 5.

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
միջին ամսական	-7	-6	-2	7	12	16	20	19	15	8	1	-5	7
բացարձակ առավելագույն	29	26	38	50	53	59	61	63	55	46	36	24	63
բացարձակ նվազագույն	-31	-35	-31	-20	8	-5	0	0	-8	-19	-24	32	-35

ՕԴԻ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 6.

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
ջրային գոլորշու առաձգականությունը (ՀՊա	2.9	3.0	4.0	6.0	8.5	10.9	13.6	13.0	10.4	7.0	5.0	3.3	7.3
հարաբերական (%)	69	70	70	68	74	77	79	79	77	72	69	69	73
պակասորդը (ՀՊա)	1.6	1.6	2.0	3.4	3.7	4.0	4.3	4.1	3.9	3.6	2.6	1.7	3.0

ՏԵՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՁՆԱԾԱԾԿՈՒՅԹ

Մթնոլորտային տեղումներ

Աղյուսակ 7.

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
Տեղումների քանակը (մմ)													
հեղուկ	4	6	13	40	109	105	62	53	35	34	22	4	487
պինդ	14	18	14	3						2	8	8	67
խառը	9	13	13	15						10	16	7	83
ընդհանուր	27	37	40	58	109	105	62	53	35	46	46	19	637
օրական առավելագույնը	34	34	65	36	42	60	61	54	64	49	39	30	65

Տարբեր քանակի տեղումներով օրերի թիվը

Աղյուսակ 8.

տեղումների քանակը(մմ)	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
≥0,1	8.4	9.3	12.5	15	19.4	17.9	12.3	10.4	9.8	9.8	8.3	7.6	141
≥0,5	6.6	7.5	10.5	13.5	18.3	16.6	11.1	9.1	8.2	8.5	6.9	6.0	123
≥1,0	5.2	6.1	9.0	11.7	16.5	15.1	9.8	8.0	6.9	7.3	6.0	4.8	106
≥5,0	1.3	1.7	3.2	5.0	9.1	8.3	5.3	4.2	3.3	3.4	2.2	1.5	49
≥10,0	0.4	0.6	1.2	1.9	4.0	4.4	2.6	2.0	1.6	1.5	0.9	0.5	22

≥20,0	0.04	0.05	0.2	0.3	0.8	1.1	0.7	0.5	0.3	0.4	0.2	0.04	5
≥30,0	0.01	0.02	0.04	0.01	0.1	0.2	0.1	0.1	0.1	0.08	0.1	0.01	0.9

Ձևածածկույթի առաջացման և վերացման ժամկետները

Աղյուսակ 9.

Ձևածածկույթով օրերի թիվը	Ձևածածկույթի առաջացման ժամկետները			Ձևածածկույթի վերացման ժամկետները		
միջին	միջին	ամենավաղ	ամենաուշ	միջին	ամենավաղ	ամենաուշ
104	5 XI	23 IX	7 I	18 IV	12 III	21 VI

Ձևածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը (սմ) ձմռան ընթացքում

Աղյուսակ 10.

Միջին	Առավելագույն	Նվազագույն
25	74	3

Քամի

Քամու ուղղության և անդորրի կրկնելիությունը (%)

Աղյուսակ 11.

	Հս	Հս Արլ	Արլ	Հվ Արլ	Հվ	Հվ Արմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
1	2	3	4	5	6	7	8	9	10
I	5	1	1	7	5	4	28	49	9
II	6	1	1	9	6	5	27	45	10
III	5	1	2	16	10	5	24	37	13
1	2	3	4	5	6	7	8	9	10
IV	6	1	3	21	13	6	22	28	14
V	4	1	3	26	18	5	18	25	16
VI	4	1	3	31	21	3	15	22	17
VII	2	1	3	40	25	3	11	15	21
VIII	2	1	3	40	27	3	9	15	21
IX	3	1	3	36	24	3	12	18	20
X	5	1	1	23	13	4	21	32	17
XI	5	1	1	14	7	4	25	43	13

XII	5	1	1	7	5	3	27	51	9
Տարի	4	1	2	22	15	4	20	32	15

Քանու արագությունը (մ/վ)

Աղյուսակ 12.

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
միջին ամսական	4.2	3.9	3.3	3.5	3.1	2.6	2.6	2.3	2.5	3.0	3.3	3.9	3.1
առավելագույն	24	18	40	20	31		31	10	31		20	24	40

ԱՄՊԱՄԱՍՈՒԹՅՈՒՆ

Միջին ամսական և տարեկան ընդհանուր և ստորին ամպամածությունը (բալեր)

Աղյուսակ 13.

Ամպամածություն	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
ընդհանուր	5.2	5.7	6.3	6.8	6.7	6.0	6.1	5.8	5.6	5.3	5.5	5.3	5.9
ստորին	3.4	3.9	4.8	5.4	5.8	5.3	5.7	5.7	4.8	4.3	4.1	3.7	4.7

▪ Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան Կույբիշևի գունավոր կոնգլոմերատների հանքավայրի տարածքում չկա: Շրջանի մթնոլորտային օդում աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների միջինացված արժեքները ներկայացվում են ըստ Դիլիջան քաղաքում կատարված դիտարկումների:

Աղյուսակ 14.

№№	Աղտոտող նյութերի անվանումները	Ֆոնային կոնցենտրացիաների արժեքները (մգ/մ³)	ՄԹԿ մ.մ. բնակելի գոտու համարմգ/մ³
1	2	3	4
1	Փոշի	0.3	0,5
2	Ծծմբի երկօքսիդ	0.05	0,5
3	Ածխածնի օքսիդ	0.8	5,0
4	Ազոտի երկօքսիդ	0.015	0.085

Տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածության ֆոնային կոնցենտրացիաներն են. փոշի՝ 0.055 մգ/մ^3 , ծծմբի երկօքսիդինը՝ 0.012 մգ/մ^3 , ազոտի երկօքսիդինը՝ 0.009 մգ/մ^3 և ածխածնի օքսիդինը՝ 0.14 մգ/մ^3 :

Արդյունահանման աշխատանքների ընթացքում և մթնոլորտային օդի պահպանության միջոցառումների նախագծման ժամանակ ընկերությունը հիմնվելու է ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 62-Ն որոշման և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի փետրվարի 18-ի թիվ 64-Լ հրամանի պահանջներին:


▪ *Ջրային ռեսուրսներ*

Հանքավայրի շրջանը հարուստ է մակերեսային ջրերով: Գրեթե բոլոր ձորերով հոսում են գետակներ: Բազմաթիվ աղբյուրներ սնում են այդ հոսքերին, որոնք լցվում են հիմնական ջրային արտերիան՝ Աղստև գետը: Աղստևը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 3000 մ բարձրությունից: Վերին հոսանքում հոսում է Մարգահովտի գոգավորությունով, այնուհետև նեղ կիրճով, ապա ընդարձակվում Դիլիջան և Իջևան քաղաքների մոտ: Գետի երկարությունը 121 կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը 2500 կմ² : Գետի տարեկան հոսքը կազմում է 256 մլն խոր. մ: Աղստևի հիմնական վտակներն են՝ Հովվաջուրը, Շտողանաջուրը, Հաղարծինը, Բլդանը, Սպիտակ-ջուրը և Գետիկը: Գետակները տիպիկ լեռնային են, անձրևներից և ձնհալքից վարարում են զարնան վերջին և ամռան առաջին կեսին: Վարարման ընդհանուր տևողությունը 10-15 օր է: Սպիտակ-ջուր գետակը հոսում է Կույբիշևի հանքավայրից մոտ 540մ արևելք, իսկ դրա ձախ օժանդակը՝ մոտ 250մ հեռավորության վրա:

Մակերեսային ջրերի մոնիթորինգ իրականացվում է միայն Աղստև գետում (նկար 8): Դիլիջան քաղաքից 1.2կմ վերև և 0.5կմ ներքև (դիտակետեր 15 և 16) Աղստև գետի ջրերի որակը բնութագրվում է որպես «լավ»:

Տեղամասից 250մ դեպի արևմուտք գտնվում է 7-10լ/վրկ դեբիտով խմելու ջրի աղբյուր: Եվս մեկ աղբյուր հայտնի է հանքավայրից հարավ-արևելք, մոտ 100մ հիպսոմետրիկ ավելի ցածր նիշերում:

Գրունտային ջրերը հանքավայրի տարածքում իսպառ բացակայում են, ինչը պայմանավորված է ռելիեֆի կտրտվածությամբ և լանջերի թեքությամբ:



Նկար 8.

Հողեր

Հանքավայրի տարածքում շրջանում հիմնականում տարածված են հողերի 2 հիմնական տիպեր՝ անտառային և լեռնամարգագետնային, սահմանափակ տարածում ունեն մարգագետնատափաստանային սևահողանման հողերը: Հողերի

բնական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է ստորև, նկար 8-ում:

Անտառային գոտում գերակշռում են անտառային դարչնագույն հողերը, որոնք աչքի են ընկնում հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Կարբոնատներով հարուստ մայր ապարների վրա զարգացած են կարբոնատա-հումուսային հողերը, որոնք տափաստանացված շագանակագույն հողերի հետ միասին մոզայիկ ձևով հանդիպում են ողջ անտառային գոտում: Ենթալայան գոտում զարգացած են լեռնա-մարգագետնային սևահողերը:

Մարգագետնատափաստանային հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր:


Լեռնամարգագետնային հողերը ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներից: Պարունակում են մեծ քանակության հումուս (18-25, երբեմն 25-30%): Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից հզորությունը տատանվում է 15-20-ից 40-50սմ-ի սահմաններում: Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է, հողային լուծույթի ռեակցիան թթվային է, pH տատանվում է 4.5-6.4-ի սահմաններում: Լեռնամարգագետնային հողերը բնորոշվում են մակերեսային և խորքային թաղված ուժեղ քարքարոտությամբ:

Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը ձևավորվել են 700-1700մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոսորակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում: Այս հողերը նկարագրվող շրջանում հանդես են գալիս լվացված, տիպիկ և կարբոնատային ենթատիպերով: Լվացված դարչնագույն անտառային հողերը զբաղեցնում են ստվերահայց լանջերը և ձևավորվել են համեմատաբար ավելի խոնավ պայմաններում, քան տիպիկ ենթատիպը: Բուն հանքավայրի տարածքում զարգացած են անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված հողերը, որոնց բնորոշ է փոքր հզորություն (առավելագույնը մինչև 0.25մ):

Հումուսի պարունակությունը հողերում կազմում է 4.9%, CO_2 -ը՝ 5.2%, կատիոնների գումարը 100գ հողում՝ 15.6մ/էկվ, pH ջրային քաշվածքում՝ 7.8:

Ծանր մետաղներ և օրգանական աղտոտիչներ հանքավայրի տարածքում չեն դիտարկվել:

ՀՈՂԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ՄԻՔԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



- ① Լեռնամարգագետնային թույլ ճմային խորքային - չհագեցած փոքր հզորության կավավազային թույլ - միջին հողմահարված
- ② Լեռնամարգագետնային թույլ ճմային փոքր հզորության կավավազային
- ③ Մարգագետնատափաստանային սևահողանման քարքարոտ միջին հզորության կավավազային
- ④ Մարգագետնատափաստանային սևահողանման քարքարոտ փոքր հզորության կավավազային թույլ - միջին հողմահարված
- ⑤ Մարգագետնատափաստանային սևահողանման մնացորդային - կարբոնատային փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑥ Անտառային գորշ քարքարոտ փոքր հզորության կավավազային թույլ - միջին հողմահարված
- ⑦ Անտառային գորշ մարգագետնացված միջին հզորության կավավազային
- ⑧ Անտառային գորշ տափաստանացված փոքր հզորության կավավազային
- ⑨ Անտառային դարչնագույն լվացված կավայնացված միջին հզորության և հզոր թույլ հողմահարված
- ⑩ Անտառային դարչնագույն լվացված կավայնացված փոքր հզորության և հզոր թույլ հողմահարված
- ⑪ Անտառային դարչնագույն լվացված տափաստանացված միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑫ Անտառային դարչնագույն լվացված տափաստանացված հզոր կավային մշակովի
- ⑬ Անտառային դարչնագույն լվացված տափաստանացված միջին հզորության կավային թույլ հողմահարված մշակովի
- ⑭ Անտառային դարչնագույն տիպիկ կավայնացված միջին հզորության
- ⑮ Անտառային դարչնագույն կարբոնատային փոքր հզորության կավավազային միջին - ուժեղ հողմահարված
- ⑯ Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑰ Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑱ Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված միջին հզորության կավային մշակովի
- ⑲ Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավային մշակովի
- ⑳ Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- ㉑ Արմատական ապարների ելքեր

Նկար 9.

▪ Բուսական և կենդանական աշխարհ

Կույբիշևի գունավոր կոնգլոմերատների հանքավայրի տարածքի բուսականությունը ներկայացված է անտառային և տափաստանային տեսակներով (նկար 10):

Անտառներում գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (*Fagus orientalis*), վրացական կաղնին (*Quercus iberica*), խոշորատեղ կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), դաժին կամ արևելյան բոխին (*C. orientalis*): Մրանց ուղեկցում են դաշտային (*Acer campestre*), սրատերև (*A. platanoides*) և բարձրլեռնային (*A. trautvetteri*) թխկիները, լոբենին (*Tilia caucasica*), հացենին (*Fraxinus excelsior*), արոսենին (*Sorbus aucuparia*, *S. graeca* և այլն): Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սալորենին (*Prunus divaricata*), մամխենին (*P. spinosa*), ընկուզենին (*Juglans regia*), սովորական տիլենին (*Corylus avellana*), հոնին (*Cornus mas*), սգնու տարբեր տեսակներ (*Crataegus*), գկեռենի (*Mespilus germanica*), թխենի (*Padus*) և այլն: Հարուստ է նաև հատապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus caesius*), մորի (*R. idaeus*), կոկոռշենի (*Grossularia*) և այլն: Անտառի վերին սահմանը եզրափակում են կեչու կորաբուն մերձալպյան նոսրանտառային մնացորդները՝ ելունդավոր և թավոտ կեչիների (*Betula pendula*, *B. pubescens*), կաղամախու (*Populus tremula*), այծուռենու (*Salix caprea*) գերակշռությամբ:


Անտառապատ տարածքների տեղադիրքը հանքավայրի նկատմամբ ներկայացված է նկար 11-ում:

Անտառային բացատներում կամ անտառի վերին սահմանից վեր, այդ թվում նաև Կույրիշևի հանքավայրի տարածքում, առանձին կղզյակների տեսքով տարածված է ենթաալպյան մարգագետնային բուսականությունը:

Այստեղ աճում են խառը տարախոտ-հացազգային համակեցությունները: Հիմնական գերակշռող տեսակներն են բարակոտնուկ սանրանմանը (*Koeleria cristata*), դաշտավլուկ մարգագետնայինը (*Poa pratensis*), դաշտավլուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմրախոտ բուրավետը (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ սիբիրյանը (*Trisetum sibiricum*):

Հանքավայրի շրջակայքի կենդանական աշխարհը բազմազան չէ: Սպիտակ-ջուր գետակի մոտակայքում դիտարկվել է սովորական դողոշ: Հանքավայրից վերև՝ կրաքարերի մերկացումներին բնակվում են ժայռային մողեսներ: Ժայռային մերկացումների մոտ, մերձալպյան բարձրախոտային համակեցություններում աշնանը դիտվել է մոխրագույն կաքավ: Հարակից անտառապատ տարածքներում

հայտնի են փայտփորներ, հոպոպ և բազմաթիվ ճնճղուկներ: Բազմաթիվ են ծղրիղները և բզեզները: Հանքավայրում դիտարկվել է նաև դաշտամուկ:



Նկար 10.



Նկար 11.

Հանքավայրի տարածքում վտանգված էկոհամակարգերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կատանվել է ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերի տվյալների վերլուծություն:

Ըստ ՀՀ բույսերի կարմիր գրքի տվյալների, Հաղարծին բնակավայրի շրջակայքում հայտնի են.

- քարբեկ երկմատնանի – վտանգված տեսակ, աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ.մ. 900-1500մ բարձրությունների վրա, ժայռոտ տեղերում,

քարքարոտ լանջերին, ջրահոսքերի ափերին: Սահմանափակող գործոն է հանդիսանում աճելավայրերի կորուստն ու դեգրադացիան՝ գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետևանքով: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելացի տարածքում:

- շնդեղ գոհարի – վտանգված տեսակ, աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1400-1500 մ բարձրությունների վրա, խոտածածկ լանջերին, կրաքարերի վրա, հաճաբենու-բոխու անտառներում, մարգագետիններում ժայռերի միջև: Սահմանափակող գործոն է՝ աճելավայրերի կորուստ՝ դեգրադացիա՝ անտառների հատման և հողերի յուրացման հետևանքով: Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Հանքավայրի տարածքում այս բուսատեսակները չեն դիտարկվել:

Ըստ ՀՀ կենդանիների կարմիր գրքի տվյալների, հանքավայրի շրջանում (Թեղուտ գյուղ) հայտնի են.

- հայկական ծաղկեփռեր – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»: Բնակվում են լայնասաղարթ անտառների բացատներում և անտառեզրերին: Վտանգման հիմնական գործոնն է ապօրինի հատումների հետևանքով անտառային էկոհամակարգերի դեգրադացումը, ինչպես նաև հողի վերին շերտի կարծրացում՝ պայմանավորված չկարգավորված ոեկրեացիոն ծանրաբեռնվածության հետ: Պահպանվում է “Դիլիջան” ազգային պարկում և “Իջևան” արգելավայրում:

- ալպյան ռոզալիա - սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»: Ապրելավայրերը՝ հաճաբենու և թեղու առկայությամբ հին, գերազանցապես լեռնային անտառներ, որտեղ կան խիստ թուլացած, չորացող, ցրտահարված և փչացող բներով ծառեր: Վտանգման հիմնական գործոններն են՝ թրթուրների զարգացման համար անհրաժեշտ տեղերի կրճատում, որը ծերացած և թուլացած ծառերի հատումների հետևանք է՝ պայմանավորված տարածման ողջ տարածքում սովորական

անտառատնտեսական գործունեությամբ: Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցում և «Դիլիջան» ազգային պարկում:

Հանքավայրի տարածքում այս կենդանական տեսակները չեն դիտարկվել:

▪ **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Կույբիշևի հանքավայրը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Սակայն շրջանում է գտնվում «Դիլիջան» ազգային պարկը: Հանքավայրի հեռավորությունը ազգային պարկի սահմանից կազմում է մոտ 230մ: Ազգային պարկը պետական ոչ առևտրային կազմակերպություն է և ստեղծվել է 2002 թվականին (փոխարինելով 1958 թ-ին հիմնադրված պետական արգելոցին), նպատակ հետապնդելով ապահովել լանդշաֆտների և կենսաբազմազանության պահպանումը, համահունչ տնտեսական զարգացումը, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության պահպանությունն Աղստև և Գետիկ գետերի ավազաններում: Ազգային պարկը հիմնելիս նախկին արգելոցի 28000 հա տարածքն ավելացել է՝ հասնելով 33765 հա-ի:

Պարկի ստեղծման նպատակներն են՝

1) Աղստև և Գետիկ գետերի ավազանների ջրային և ցամաքային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի ապահովումը, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության և պատմամշակութային հուշարձանների պահպանությունը.

2) հյուսիսային Հայաստանին բնորոշ հազվագյուտ և անհետացող վայրի բույսերի ու կենդանիների տեսակների, գենոֆոնդի և դրանց բնակության միջավայրի պահպանությունը.

3) բնական լանդշաֆտների, դրանց առանձին տարրերի, բնական գործընթացների և երևույթների գիտական ուսումնասիրությունը.

4) պարկի տարածքի բնական էկոհամակարգերում ընթացող գործընթացների կանխատեսումն ու գնահատումը.

5) բնական օբյեկտների, այդ թվում՝ կենսաբանական պաշարների արդյունավետ օգտագործումը, օգտագործման ձևերի ու բնության պահպանության գիտական հիմունքների մշակումը.

6) էկոլոգիական մոնիթորինգի կազմակերպումը, բնության տարեգրության վարումը և պարկի ու հարակից տարածքների բնության թանգարանի գործունեության կազմակերպումը.

7) ճանաչողական զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացման նախադրյալների ապահովումը.

8) բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության և իրազեկման աշխատանքների իրականացման ապահովումը:

Ազգային պարկի բուսաշխարհն ընդգրկում է 902 տեսակ ծաղկավոր բույսեր, որոնցից 40-ը՝ հազվագյուտ: 29 տեսակ գրանցված է Հայաստանի բույսերի Կարմիր գրքում: Պարկում բնադրող թռչուններից 16 տեսակ, ինչպես նաև պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող կենդանիներից երկարականջ (ականջեղ) ոզնին, Եվրոպական լայնականջ ծալքաշուրթը, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, խայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և վայրի կատուն գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:

Ինչպես արդեն նշվել է, հանքավայրի դուրս է «Դիլիջան» ազգային պարկի սահմաններից: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր, բներ, բնադրման վայրեր չեն արձանագրվել:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Տավուշի մարզում հաշվառված բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 15.

Անվանումը	Տեղադիրքը	Հեռավորությունը հանքավայրից
Կովասարի փոխակերպարային թերթաքարեր	Տավուշի մարզ, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հարավ՝ Վարագաջուր (Հախում) գետի վերին հոսանքի ավազանում, Վարագաջրի ձախ վտակ Կառնուտի և Վարագաջուր գետի աջ չոր վտակի հատման կետում, Կառնուտ վտակի հոսանքն ի վեր գնացող գրունտային	Մոտ 40կմ

	ավտոճանապարհի աջ կողմում	
«Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից մոտ 6 կմ հարավ-արևմուտք, Վարազաջուր (Հախում) գետի ձախափնյա անտառապատ լանջին՝ գրունտային ճանապարհի աջ կողմում, 12-13 դարերի Շահմուրադ (Չխմուրադի, կամ Գետակիցք վանքի) վանքային համալիրից մոտ 150 մ դեպի հյուսիս-արևմուտք	Ավելի քան 25կմ
«Չինչինի անկյունային աններդաշնակություն»	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արլ եզրին	Մոտ 35կմ
«Չինչինի սանդղափուլ քարափներ»	Տավուշի մարզ, Չինչին գյուղից ուղիղ գծով 1.5կմ հարավ-արևելք, Հախում գետի աջակողմյան լանջին	Մոտ 37կմ
«Պլագիոգրանիտ-պորֆիրային դայք»	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, Տավուշ գետի ձախ ափին, գետից 5 մ բարձրության վրա	Մոտ 36կմ
«Քվարցային պլագիոպորֆիրների սյունաձև անջատումներ»	Տավուշի մարզ, Հովք գյուղից 900 մ դեպի հս-ալ, Աղստև գետի ձախ ափին, Երևան-Իջևան ավտոմայրուղու ձախ կողմում	Մոտ 8կմ
«Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կոդբ գյուղից 4 կմ հարավ	Ավելի քան 35կմ
«Օձաքար» լեռ	Տավուշի մարզ, Պառավաքար գյուղից 3 կմ (ուղիղ գծով 1 կմ) հյուսիս-արևմուտք, Պառավաքար-Վազաշեն գրունտային ավտոճանապարհի աջ կողմում՝ Պառավաքար լեռնագագաթից 1,5 կմ հարավ-արևմուտք, Կաղնուտաթումբ լեռնագագաթից մոտ 3 կմ հյուսիս-արևելք	Մոտ 40կմ
«Զորականի սոսի»	Տավուշի մարզ, Զորական գյուղական համայնքի վարչական սահմանում	Ավելի քան 45կմ
«Վարդան Մամիկոնյանի կաղնի»	Տավուշի մարզ, Ակնաղբյուր գյուղական համայնք	Մոտ 25կմ
«Մարի գյուղի սոսի»	Տավուշի մարզ, Մարիգյուղ	Մոտ 30կմ


	գյուղական համայնք, Երևան-Նոյեմբերյան ճանապարհից աջ	
«Գետահովտի մամռապատ ժայռ»	Տավուշի մարզ, Գետահովտ գյուղից մոտ 1.8 կմ հյուսիս- արևմուտք՝ Սառնաջուր գետի ձախ ափին	Ավելի քան 15կմ
«Զիկատարի տանձուտ»	Տավուշի մարզ, «Զիկատար» ուսումնական կենտրոնից հարավ-արևմուտք, 600 մ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զիկատարի անտառպետություն	Մոտ 25կմ
«Ոսկեպարի կենի»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զուջևանի անտառպետություն, Ոսկեպար համայնքից 6 կմ հարավ-արևմուտք	Մոտ 27կմ
«Զոնջուկուտ»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Դովեղի անտառպետություն, Բարեկամավան համայնքից 1 կմ հարավ-արևմուտք	Մոտ 40կմ

Հանքավայրին ամենամոտ բնական հուշարձանը «Քվարցային
պլազիոպորֆիրների սյունաձև անջատումներ» են, որոնք գտնվում են հանքավայրից
մոտ 8կմ հեռավորության վրա: Հանքավայրում ծրագրավորվող արդյունահանման
աշխատանքները չեն կարող որևիցե կերպ անդրադառնալ բնության հուշարձանների
իրավիճակի վրա:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

• Ենթակառուցվածքներ

Կույբիշևի գունավոր կոնգլոմերատների հանքավայրը գտնվում է ՀՀ Տավուշի մարզում՝ ՀՀ տարածքի հյուսիս-արևելյան հատվածում:



նրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Մարզը հարավ-արևելքում և հարավում սահմանակից է Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ Լոռու մարզին և պետական սահմանով՝ Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝

Աղբբեջանին: Մարզի կենտրոնով դեպի հյուսիս-արևելք հոսում է Աղստև գետը: Ծովի մակարդակին ամենամոտ կետը (Հայաստանի Հանրապետության ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝ 390 մ, ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրդուզ լեռն է՝ 2 993 մ: Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Գտնվում է Հայաստանի Հանրապետության չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1 900 -2 100 ժամ է, անարև օրերի թիվը՝ 65: Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Բնական լիճը՝ Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է: Այստեղ են գտնվում Զոդազի, Հախումի, Տավուշի, Այգեձորի և Իջևանի արհեստական ջրամբարները: Մարզի ընդհանուր մակերեսի 40.3%-ը զբաղեցնում են խառն անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը և Իջևանի անտառային այգին: Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակչիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային տուրիզմի զարգացման համար: Իջևան քաղաքից 7 կմ հեռավորության վրա գտնվող Ենոքավան գյուղի վարչական տարածքի (ծովի մակերևույթից 1 370 մ բարձրությամբ) 7 հա տարածության վրա գործում է Հայաստանում նախադեպը չունեցող էքսթրիմի և զվարճանքների պարկը, որտեղ տարեցտարի ավելանում են ակտիվ հանգստի տեսակները, ինչպես նաև ջրային սպորտաձևերը: Այցելուների թվաքանակի աճը վկայում է, որ այն ուշագրավ է դարձել նաև արտերկրից ժամանող զբոսաշրջիկների համար և կիսթանի էկոտուրիզմի զարգացումը երկրում: Մարզը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դոլոմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը: Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս-Թբիլիսի-Երևան գազատարը: Մարզով ձգվում են 146 կմ միջպետական, 253 կմ

հանրապետական նշանակության ճանապարհներ: Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ-ոց հատվածը (ներկայումս չի գործում):

Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ափով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը: Մարզի 47 բնակավայրեր սահմանամերձ են Աղրբեջանին և ունեն ռազմավարական կարևոր նշանակություն՝ մշտապես կրելով պատերազմական իրադարձությունների հետևանքներ: Դրանով է պայմանավորված նաև այդ բնակավայրերի մեծ մասի քիչ բնակեցվածությունն ու տնտեսապես թույլ զարգացվածությունը:

2019թ.-ին Տավուշի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 1.5%,
- գյուղատնտեսություն՝ 4.4%,
- շինարարություն՝ 3.8%,
- մանրածախ առևտուր՝ 2.4%,
- ծառայություններ՝ 1.0%:


Մարզը հանրապետության վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը: Վերջին տարիներին իրագործված բազմաթիվ խթանող գյուղատնտեսական ծրագրերի շնորհիվ մեծ զարգացում է ապրում պտղաբուծությունը, ինչով մարզը նախկինում մեծ համբավ է վայելել: Տարեցտարի զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը: Մարզի տնտեսության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել զերակշռող են սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը:

Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են հանվում գինիներ, պահածոներ, հանքային ջուր, քարե և փայտե, վերջերս նաև տեքստիլ արտադրատեսակներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզի սոցիալ-տնտեսական ոլորտի որոշ տվյալներ ներկայացվում են ստորև նկար 13-ի ինֆոգրամայում և աղյուսակներ 16-18-ում:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՌԱՏԱՐԻՔԱՑԻՆ ԲՈՒՐՎՈՂ
2020թ. հունվարի 1-ի դրությամբ



Նկար 13.

Աղյուսակ 16.

ՄԱՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ					
	Քանակը				
	2015	2016	2017	2018	2019
Մանրածախ առևտրի օբյեկտներ, բնդամներ	1 145	1 161	1 232	1 297	1 430
այդ թվում՝					
խանութներ	848	874	985	1 054	1 220
կրպակներ	252	240	196	189	159
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	1	1	1	1	1
առևտրի այլ օբյեկտներ	43	45	49	52	49

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
	Քանակը				
	2015	2016	2017	2018	2019
Պետական նախադպրոցական	59	58	63	64	66
Պետական հանրակրթական	81	81	81	81	81
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	19	18	18	17	17
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	3	3	3	3	2
Պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6	6	6
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	2	2	2	2	2

¹ Ներառվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

ՔԱՂԱՔՆԵՐ	
Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
Իջևան	20 293
Դիլիջան	17 295
Բերդ	7 478
Նոյեմբերյան	4 514
Այրում	1 815

ԳՑՈՒՂԵՐ	
Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
Իջևանի տարածաշրջան	
1 Ագատամուտ	2 807
2 Ակնաղբյուր	504
3 Աճարկուտ	166
4 Այգեհովիտ	3 198
5 Կայան	304
6 Այաջուր	4 152
7 Բերքաբեր	356
8 Գանձաքար	3 481
9 Գետահովիտ	2 032
10 Դիտավան	370
11 Նևոքավան	513
12 Նուսահովիտ	318
13 Նուսաձոր	626
14 Խաչքառակ	1 830
15 Մաղկավան	514
